

Առողջապահական համակարգի հարգելի՛ ներկայացուցիչներ, սիրելի՛ բուժաշխատողներ,  
Շնորհավորում եմ Ձեզ մասնագիտական տոնի՝ Բուժաշխատողի օրվա կապակցությամբ:

Անգնահատելի է այն աշխատանքը, որը Դուք իրականացնում եք՝ անկախ իրավիճակից, հանդիպող խոչընդոտներից:

Հատկապես վերջին տարիներին, երբ ամբողջ աշխարհում լայնորեն տարածվեց COVID-19-ը, այնուհետ Արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ Դուք հայտնվել էիք պայքարի առաջնագծում ու պայքարում էիք՝ հավատարիմ ձեր երդմանը:

Այսօր էլ ամեն ինչ անում եք, որ պատերազմում վիրավորվածները, ովքեր դեռ շարունակում են բուժում ստանալ, շուտափույթ ապաքինվեն ու տուն վերադառնան:

Շնորհակալ ենք ձեր նվիրումի, ձեր հոգածության, ձեր կրած չարչարանքների համար:  
Կրկին շնորհավորելով առողջապահության համակարգի բոլոր ներկայացուցիչներին՝ մաղթում եմ ուժ ու տոկունություն:

Աստված պահապան Ձեր ընտանիքներին: